ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 դեկտեմբերի 2015թ. թիվ 381-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ
ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. նոյեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեից գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 1361-Ն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետի և 4-րդ կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հիմք ընդունելով 2015թ. նոյեմբեր ամսին Լոռու մարզում ուժեղ քամիների հետևանքով վնասներն արձանագրած հանձնաժողովի ակտերը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. նոյեմբերի 19-ի N 1361-Ն որոշման 4-րդ հավելվածի 3.1 կետով հատկացված 102725.0 հազար դրամ գումարը հատկացնել ուժեղ քամիների հետևանքով տուժած համայնքների ղեկավարներին՝ տուժած բնակիչներին բաշխելու նպատակով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2015թ. դեկտեմբերի 10
ք.Վանաձոր